# ՀՐԵՂԵՆ ՊԱՐԻՍՊ

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ԶԱՔԱՐԻԱ 2.1-5

***1***Եվ ես աչքերս վեր բարձրացրի և ահա մի մարդ տեսա՝ ձեռքին չափալար: ***2*** Եվ ասացի. Դու ո՞ւր ես գնում: Եվ նա ինձ ասաց. Երուսաղեմը չափելու, որ տեսնեմ, թե որքան է լայնությունը, և որքան՝ երկարությունը: ***3*** Եվ ահա ինձ հետ խոսող հրեշտակը դուրս եկավ, և մի ուրիշ հրեշտակ դուրս եկավ նրան ընդառաջ: ***4*** Եվ նա ասաց. Վազի՛ր և ասա՛ այս երիտասարդին. Երուսաղեմն իր մեջ եղած մարդկանց և անասունների շատության պատճառով առանց պարսպի պիտի բնակեցվի: ***5*** Եվ ես նրա համար ***շուրջ բոլորը հրեղեն պարիսպ պիտի լինեմ***, ասում է Տերը, և նրա մեջ փառք պիտի լինեմ:

## ՏԻՐՈՋ ՏԵՍԻԼՔԸ ՀՐԵՂԵՆ ՊԱՐԻՍՊԻ ՄԱՍԻՆ

*Զաքարիան տեսնում է մի տեսիլք այն օրերին, երբ Երուսաղէմի պարիսպները քանդուած էին, քաղաքը անպաշտպան էր, ժողովուրդը վախեցած: Սակայն հենց այդ խառնաշփոթի ու տկարութեան մէջ Աստուած ասում է.*

> ***5*** *Եվ ես նրա համար շուրջբոլորը հրեղեն պարիսպ պիտի լինեմ:*
>
> *Ո՛չ քարից, ո՛չ երկաթից, այլ՝* ***կրակով կառուցուած պարիսպ:***
>
> *Այս խոստումը բացահայտում է երեք հրաշալի իրականություն մեր կյանքի մեջ այսօր՝*
>
> 1. *Աստծո ներկայությունը,*
> 2. *Աստծո պաշտպանությունը,*
> 3. *Աստծո փառքը մեր մէջ:*

## ՀՐԵՂԵՆ ՊԱՐԻՍՊԸ – ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

*Ամբողջ Սուրբ Գրքի ընթացքում* ***կրակը խորհրդանշում է Աստծո կենդանի և գործնական ներկայությունը:***

*Ել. 13.21-22 - **21** Տերը գնում էր նրանց առջևից՝ ցերեկը ամպի սյունով ճանապարհ ցույց տալու նրանց, իսկ գիշերը՝ կրակի սյունով, որ նրանց լույս տա, որպեսզի գիշեր-ցերեկ գնան: **22** Ցերեկն ամպի սյունը, իսկ գիշերը կրակի սյունը ժողովրդի առջևից չպակասեցրեց:*

*Կրակի սյունը Աստծո կենդանի ներկայության տեսանելի նշանն էր:*

*Այսօր նույն այդ կրակը Սուրբ Հոգու միջոցով բնակվում է հավատացյալի սրտում:*

*Գործք 2.3-4 – Եվ նրանց երևացին բաժանված հրե լեզուներ, որոնք նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա:*

*Այժմ այդ կրակը քո ներսում է՝ քեզ առաջնորդելու, մխիթարելու և զորացնելու համար:*

## ՀՐԵՂԵՆ ՊԱՐԻՍՊԸ – ԱՍՏԾՈ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

***1. Կրակը որպես պաշտպանիչ պատնեշ***

*Ելից 14.9 – Եգիպտացիները նրանց հետևից ընկան: Փարավոնի բոլոր ձիերը, կառքերը, նրա ձիավորներն ու զորքերը հասան և գտան նրանց բանակատեղ դրած ծովի մոտ...:*

*Ելից 14.19 – Աստծու հրեշտակը, որ գնում էր Իսրայելի բանակի առջևից, <u>ելավ ու գնաց նրանց ետևից</u>. ամպի սյունն էլ ելավ նրանց առջևից և կանգնեց նրանց ետևում.*

*Նույն Աստծո ներկայությունը, որը քեզ պաշտպանում է, **խափանում է թշնամուն**:*

*Երբ դու շրջապատված ես Աստծո կրակով, ոչ մի զենք չի կարող վնասել քեզ:*

*Եսայի 54.17 – Ամեն մի զենք, որ շինված է քո դեմ, հաջողություն չպիտի ունենա, և ամեն լեզու, որ դատաստանի է ելնելու քո դեմ, պիտի դատապարտվի:*

*Դևերը չեն կարող անցնել Աստծո կրակի սահմանը:*

*Քո շուրջը կա անտեսանելի պատնեշ՝ կենդանի Աստծո ներկայությամբ:*

*որովհետև մեր Աստվածը ոչնչացնող կրակ է (Եբր. 12.29):*

**2. *Կրակը՝ Փորձութեան Մեջ***

*Դանիել 3.23-27-ը պատմում է Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի մասին:*

*Դան. 3.23 - Եւ այս երեք մարդիկը՝ կապուած ընկան կրակով բորբոքուած հնոցի մէջ:*

***26** Այն ժամանակ Սեդրաքը, Միսաքը եւ Աբեդնագովը դուրս եկան կրակի միջից: **27** ... նորանց մարմնի վրա կրակը չէր տիրել եւ նորանց գլխի մազը չէր այրուել եւ նորանց անդրավարտիքները չէին փոխուել, եւ կրակի հոտն էլ չկար նորանց վրա:*

*Հալեցնող կրակը քեզ չի այրի, այլ կմաքրի:*

## ՀՐԵՂԵՆ ՊԱՐԻՍՊԸ – ԱՍՏԾՈ ՓԱՌՔԸ ՄԵՐ ՆԵՐՍՈՒՄ:

***5** Եվ ես նրա համար շուրջբոլորը հրեղեն պարիսպ պիտի լինեմ, ասում է Տերը, և նրա մեջ փառք պիտի լինեմ:*

*Աստուած ոչ միայն պաշտպանում է քեզ՝ դրսից, այլ նաև **լցնում է քեզ՝ ներսից:***

## ՓԱՌՔԸ՝ ՏԱՃԱՐԻ ՄԵՋ

*Ելից 40 – **34** Եվ մի ամպ ծածկեց ժողովի վրանը, և վրանը լցվեց Տիրոջ փառքով: **35** Մովսեսը չէր կարողանում մտնել ժողովի վրանը, որովհետև ամպը ծածկել էր այն, և Տիրոջ փառքը լցրել էր խորանը: **38** Որովհետև Տիրոջ ամպը ցերեկը վրանի վրա էր լինում, իսկ գիշերը դրա վրա կրակ էր լինում Իսրայելի ամբողջ ժողովրդի առաջ՝ նրանց բոլոր ճամփորդությունների ընթացքում:*

- *Այդ նույն փառքը այսօր լցված է հավատացյալի սրտում:*

*Բ Կոր. 4.6 – Որովհետև Աստված, որ ասաց, թե խավարից թող լույս ծագի, հենց ինքը մեր սրտերի մեջ ծագեց՝ Աստծու փառքի գիտության լույսը տալու, որ ճառագում է Հիսուս Քրիստոսի դեմքից:*

*Այդ կրակը փոխում է մեզ, սրբացնում և դարձնում Աստծո փառքի արտացոլում:*

## ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԱՌԱՆՑ ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՔԱՂԱՔ

***4*** *Եվ նա ասաց. Երուսաղեմն իր մեջ եղած մարդկանց և անասունների շատության պատճառով առանց պարսպի պիտի բնակեցվի:*

*Այսօրվա եկեղեցին ֆիզիկական պատեր չունի, այլ ունի հոգևոր պարիսպ՝ Սուրբ Հոգու կրակը:*

*Նույն կրակի սյունը, որը առաջնորդեց Իսրայէլին, այսօր առաջնորդում է Քրիստոսի եկեղեցին:*

*Նույն կրակը, որը պաշտպանեց նրանց Փարաւոնից, այսօր պաշտպանում է քեզ մեղքի և խավարի ուժերից:*

*Բարձրացրո՛ ձեռքերդ եւ աղաղակիր հավատքով՝*

*«Տե՛ր, եղի՛ր իմ Հրեղեն Պարիսպը: Շրջապատի՛ր ինձ, պաշտպանի՛ր և լցրո՛ ինձ Քո փառքով»:*

1. ***Պահի՛ր կրակը վառ*** *– Ջանասիրության մեջ մի՛ ծուլացեք, հոգով ջերմեռա՛նդ եղեք, Տիրո՛ջը ծառայեք:(Հռոմ. 12.11):*

2. ***Քայլի՛ր սրբությամբ*** *– Հալեցնողի կրակը մաքրում է (Մաղաքիա 3.2-3):*

## ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ